ջութիւնը, որ ի վիճակի է առհասարակ հետապընդելու եւ ի վերջոյ նաեւ իրագործելու առաջադրուած նպատակը: Որո՞նք են, միեւնոյն ժամանակ, այն օժանդակ ազդակները, որ ի սպաս դրուել կարող են ազգային քաղաքականութեան պատուանդանի կառուցման եւ ամրացման գործին:

Հարկաւ, այս խնդրի պատասխանը չէ կարող լինել մէկ եւ միատեսակ, այլ կախումն ունի նրան քննութեան առարկայ դարձնող անհատի եւ խմբակցութեան քաղաքական ու ընկերային դաւանանքից, նրա որդեգրած ազգային իտէալից եւ վերջինիս ի սպաս դրուող գործելու կերպից: Եւ որչափ քիչ են մի ազգի զանազան հատուածների ու խմբակցութիւնների մէջ եղած տարբերութիւնները զէթ ազգային իտէալի շուրջը, որչափ հաւաք եւ համախումբ նրա նիւթական ու բարոյական կարողութիւնները, այնչափ էլ աւելի դիւրին՝ դէպի այդ իտէալը տանող ճամբան: Պայմանով սակայն, որ առաջադրուող իտէալը առհասարակ բարձր չլինի ազգի բովանդակ ոյժերի հասողութիւնից եւ տարողութիւնից:

Որչափ եւ ըստ երեւոյթին պարզ է առաջադրուած խնդիրը, այնուամենայնիւ նա այսօր էլ շարունակում է հայ իրականութեան համար մնալ հիմնական: Եւ հասկանալի է՝ ինչո՛ւ: Մոռնալու չէ, որ հազիւ 35–40 տարի է անցել այն օրից, երբ հայ ժողովուրդի առջեւ ձեւակերպուած դրուեց նրա քաղաքական վերածնութեան մեծագոյն խնդիրը, նրա ազգային իտէալը: Թէեւ ոգորումներով ու փորձերով բաւականաչափ հարուստ, բայց տակաւին մէկ սերունդ է ապրել ու պայքարել այդ իտէալի համար: Իսկ ի՞նչ է այդ ժամանակամիջոցը՝ առաջադրուած մեծ նպատակի ճամբուն վրայ: Շատ կարճ տեւողութիւն:

Մոռնալու չէ, որ հայութիւնը — թէեւ քաղաքական ու մշակութային անցեալով հարուստ — ընդամէնը մէկ դար առաջ աւելի ինչ չէր, քան եկեղեցական մի համայնք, այն եւս՝ բաժան-բաժան, ցիրուցան: Մեր սերունդը երբ երեխայ էր, «Հայաստան», «ազգասէր» բառերը սակաւաթիւ ընտրեալների բերնում միայն հնչում էին որպէս սրբազան պատգամներ, այլապէս նրանք համանիշ էին քաղաքական բանդագուշանքի, վերջինիս ետեւից վազող երազատեսների:

Աւելին դեռ, Հայաստանով հետաքրքրուողներից, «ազգասէր»ների խմբակներից՝ որպէս վտանգաւոր տարրերից՝ փարսախներով հեռու էին փախչում անգամ շատ շատերը նրանցից, որոնք այսօր իրենց մենաշնորհն են համարում խօսիլ ազգի եւ հայրենիքի անունից: Տեսէ՛ք ուրեմն՝ ո՛րչափ դերմարդկային ոյժեր են ըսպառուել ազգային իտէալը ժողովրդականացնելու համար, եւ թէ՝ որչափ կենսունակ է այն, իտէալը ինքը, որ բաղդատաբար կարճ միջոցում սկզբունքային վճռական յաղթանակ է տարել անթիւ ու բազմապիսի հակառակորդների վրայ:

Եւ եթէ քննելու լինինք մեր ազգային իտէալի ապրած տագնապները, նրա տարած յաղթանակների քով վերյիշենք նաեւ կրած պարտութիւնները, վերջիններիս հիմնական պատճառը պիտի գտնենք, արտաքին ազդակներին կից եւ նրանց համազօր, մեր ներքին ճակատի անսահման թուլութիւնը:

Հայ ազգային իտէալի առաջամարտիկները ստիպուած են եղել անսպառ եռանդ թափել որչափ արտաքին թշնամիներին, այնչափ եւ ներքին հակառակորդներին յաղթահարելու համար, պայքարելով միաժամանակ երկու հըզօր ճակատների վրայ, այն եւս՝ նորակազմ ու տակաւին թոյլ ոյժերով: Դրա համար է, որ այսօր էլ տեսականօրէն բնաւ անտեղի չէ այն հարցը թէ՝ Հայ Դատի գործօն առաջադրութիւնը կամ Հայ Յեղափոխութիւնը ժամանակից վա՞ղ ծագեցաւ, թէ՞ ուշ:

Տեսականօրէն դատելով՝ հարկաւ վա՛ղ, հայութեան տակաւին անպատրաստ վիճակում: Երեւակայեցէք, եթէ այն անսպառ եռանդը, այն անհաշիւ նիւթական ու բարոյական կարողութիւնները, որ ծախսուեցան մեր ներքին ճակատը յարդարելու համար, հայի քաղաքական գիտակցութիւնը բարձրացնելու նպատակով, ի սպաս դրուած լինէին արտաքին ճակատի վրայ: Ո՛րչափ տարբեր պիտի լինէր արդիւնքը: